

ոստոցն ոչ ինչ բնաւ էին նմանք եւ կամ հաւասար պտղաբերութեան պտղաբոյծ ատոթութեանն այլ պտղոյ ձիթենւոյն, այլ նուազ¹ առաւել թուով եւ վտիտք² ատոթութեամբ, որպէս թէ³ ծնկեալք էին:

17 «Եւ ընդ ահեկէ⁴ բեմբին տեսի⁵ արծռ մի բարձր չորեքկուսի, ծովագոյն սառնակերպ, եւ ծածկեալ թանձր կտաւով թխագունիւ⁶: 18 Եւ վերացեալ կտաւն ի շնչմանէ քաղցր աւդոյն եկելոյ՝ տեսի⁷, եւ ահա սկուտեղ արծաթի⁸ մեծ ի վերայ արծռոյն: 19 Եւ ի վերայ սկտեղն⁹ կայր նափորտ մի բեհեզեայ ծալեալ եւ եղեալ¹⁰, եւ առ նմին գունդ մի ոսկի բոլոր, եւ մագաղաթ հատուածածեւ չորեքկուսի, գրեալ ի սկզբանն¹¹ կարգս ինչ սակաւ՝ ոսկետեսիլ գրով սքանչելապէս, իբր թէ¹² ձեռամբ գրչի ճարտարի. եւ ի միջոյ կողման մագաղաթին, հեռի յոսկեգիր կարգացն, երեւեին այլ կարգք ինչ¹³ եղծեալք ջնջագիրք, որոց ոչ ինչ բնաւ երեւեր տեսիլ գրոյն¹⁴ եւ կամ կերպարան¹⁵: 20 Եւ հուսկ յեզր մագաղաթին¹⁶, հեռի ի ջնջագիր կարգացն, դարձեալ տեսանէի այլ եւս կարգ մի եւ կես կարգի, գրեալ¹⁷ ոսկեգիր գրով առաւել սքանչելապէս, ըստ¹⁸ տեսոյ առաջին կարգացն գրելոց ի սկզբանն մագաղաթին: 21 Եւ կիսագիր կարգին մինչեւ ցմիջոց գրոյն՝ եւս առաւելագոյն էր¹⁹ ոսկով, եւ այլն կարմրադեղով էր²⁰: 22 Եւ կային շուրջ զծնաւտիւք սկուտեղն անթիւ բազմութիւնք²¹ տղայոց²² արուաց, այլ սակաւ եւ իգաց. ամենեքեան պայծառացեալք²³ լուսազգեստք¹ էին: 23 Բայց ճառագայթք փայլա-

1 Ձ. նուազ

2 ԲԳտ. վտիտ

3 Ձ. որպէս (չիք թէ)

4 Ձ. ահեկ

5 ԲԳտ. չիք տեսի

6 Ձ. թղխագոյն. Ստ. թխագոյն

7 Ստ. եւ տեսի

8 ԲԳտ. սկտեղ արծաթի

9 ՁՍտ. սկուտեղն

10 Ձ. չիք եւ եղեալ

11 Ձ. հատածեւ չորեքկուսի գրեալ սկզբմանն

12 Ձ. չիք իբր թէ

13 ՁՍտ. կարգ ինչ

14 Ստ. գրոցն

15 Ձ. տեսիլ գրոյն կերպարան

16 Ստ. մագաղաթին

17 ՁՍտ. չիք գրեալ

18 Ձ. ոսկեգիր գրով առաւելապէս ըստ

19 ԲԳտ. եւ եւս առաւելագոյն էր. Ձ. չիք էր

20 ՏՏ. եւ այլն (Ստ. մինչեւ) ցկատարումն կարմրադեղով երեւեր

21 ԲԳտ. բազմութիւն

22 Ձ. անթիւք տղայոց

23 Ձ. պայծառացեալ